

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 բուլբի, կես տարվան 6 բուլբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшахъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւանիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Ընթացիկ վիճակագրութիւն.—Ներքին Տե-
ստութիւն. «Հայերէն ուսուց լեզուի երդուցնե-
լու» և «Հայկական ամուսնութիւնները» հարցերի
պատմութեան մասին. Թիւրքահայ եկեղեցւոր-
ները. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաս-
տանից.—ՀԵՌԱՊԵՐՆԵՐ.—ԲՈՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հին ուր-
ուականը:

ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեզ բոլորիս յայտնի է, թէ ո՛ր աստի-
ճան անկատար և պակասաւոր են մեր
տեղեկութիւնները մեր երկրի ընթացիկ
կեանքի մասին: Ամենատարրական կենսա-
կան երեւոյթները մինչև այժմ դեռ չեն
ենթարկված վիճակագրական հետա-
զոտութեան: Փոքր է շատ է բաւարար
կերպով ուսումնասիրված են այն մի բանի
առարկաները, որոնք առանձին նշանակու-
թիւն ունեն վարչական հաստատութիւն-
ների համար, օրինակ ենթարկված են
հարկաւորութեան, ինչպէս զանազան գոր-
ծարաններ և ցանքերը: Իսկ դրանցից
դուրս՝ միւս բազմաթիւ առարկաների վե-
րաբերութեամբ կատարվող փոփոխութիւն-
ները մնում են առանց արձանագրվելու:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին՝
անցեալ 1898 թուականին Ռիֆլիսի օգե-
րութեամբ անցան քիմիական և ֆիզիկական
ընթացիկ և միջակայքի վիճակագրու-
թեան առաջին փորձը էր մեր երկրում:
Վովկասի զանազան կողմերից ժողովվում
են իւրաքանչիւր ամսվայ ընթացքում տե-
ղի ունեցած փոփոխութիւնների մասին
տեղեկութիւնները, մշակվում են և հրա-

տարակվում: Այդպիսով կազմվում է եղա-
նակի փոփոխութեան, անձրեւի, ձիւնի,
երաշտութեան, կարկուտների, ծանրա-
շափի ցուցումների մի ամփոփ պատկեր,
որից կարելի է օգտվել գործնական ե-
ղրակացութիւնների համար: Անշուշտ այդ
պատկերը դեռ կատարելա չէ, որովհետեւ
օգերեւութեամբ անհայտ կայարանների ցան-
ցը դեռ խիտ կերպով չէ պատկեր մեր գա-
ւառները, բայց նա յամենայն դէպս ար-
դէն ցուցակագրում է խոշոր և նշանա-
ւոր օգերեւութեամբ անհայտ փոփոխութիւն-
ները:

Այժմ, ինչպէս հաղորդում են մեզ
վարչական շրջաններում միտք է ծագել
ընթացիկ վիճակագրութեան հա-
մար ստեղծել գաւառական առանձին
հաստատութիւններ, որոնք պէտք է ժո-
ղովին գաւառի վերաբերեալ անհրաժեշտ
տեղեկութիւնները, մշակեն նրան յայտնի
աստիճան և ուղարկեն կենտրոնական վի-
ճակագրական հիմնարկութեան: Դիտա-
ւորութիւն կայ, գաւառական վիճակագրա-
կան կոմիտեաներին աջակցելու համար,
հրահրել տեղական ինտելիգենցիային,
զանազան հիմնարկութիւնների ծառայող-
ներին, անտառապետներին, հարկաւոր-
ութեան տեսուչներին, ուսուցիչներին, բա-
հաններին և մասնաւոր անձանց: Ան-
կասկած, եթէ համութեամբ առաջ տար-
վի գործը, ղեկավարները կարողանան հե-
տաքերը և ոգևորել նրանք ժողովուրդնե-
րին և տեղեկութիւններ հաղորդողներին,
արագ և խելացի կերպով մշակեն նրանք
և ժամանակին լոյս ընծայեն նրանց
այն ժամանակ և մեր մէջ աշտուղութիւն
կունենայ ընթացիկ վիճակագրութիւնը,
որի բացառականութիւնը մեզանում պատճառ
է եղել լուրջ թիւրիմացութիւնների
և անպատեհութիւնների:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԻՆ ՈՒՐՈՒՄԱԿԱՆԸ

V

Կրօնաւորական որսորդութեան թունալից հար-
ուածները ամենից առաջ ընդունեց Ռուսիոյ
գահը Վրիլկիայի մէջ, շարքի աղտոյի մի փոքրիկ
գաղութիւններէն էին հիւնի, հերոսական
ջանքերի շնորհիւ անկախ պետութիւն էին կազ-
մել, բայց բախտ չունէին: Դրանց Վրիլկիան ան-
դարձ ծեծվում էր սելջուկեան սուլթանների,
մամուլիկների, յոյների յարձակումներից, իսկ
ներսից նրան կեղծում, պատուաւորում էր ա-
ւելի անգործ, աւելի անաւոր թշնամի—եկե-
ղեցական կատաղի վէճերը: Յոյները և կաթո-
լիկները աշխատում էին միմեանց ձեռքից խլել
այդ չաղ որսը, իսկ հայ կղերը, որ ֆանատի-
կոսութեամբ և կոյր եռանդով յետ չէր մնում
իր անհատ մրցակիցներից՝ ոչինչ չը խնայեց,
որ երկու որսորդներն էլ ձեռնուռնային մնան:
Կարող էր այսպիսի ներքին կեանք ունեցող մի
երկիր դիմաւոր Արմենեան Ասիայում բար-
ձրացած ահաւելի փոթորիկներին: Ռուսիոյ
հարստութիւնը մի անյայտ հոգեվարքի մէջ ըն-
կաւ...

Բուն Հայաստանը հեծում էր իսլամի լուծի
տակ. Վրիլկիան նրա համար յոյսի միակ ճրագն
էր, բայց ով էր հասկանում այս բանը: Ժողո-
վուրդը տգէտ, նախապաշարված, առօրեայ
թշուառութիւնների անդունդը գործված՝ ամեն
ինչ յանձնել էր կղերին, իսկ սա անհաշուու-
թեան ամբողջ փոթորիկներ էր ուղարկում այդ
փոքրիկ լոյսի դէմ: Վրիլկիայի արքեպիսկոպոս
հասկանում էին, որ առանց Եւրոպայի օգնու-
թեան չէ կարելի գոյութիւն պահպանել իսլամի

ովկանոսի մէջ. Եւրոպան խոստումներ էր ա-
նում, պայման դնելով եկեղեցիների միութիւնը:
Վրիլկիայի հայ կղերը, հեռու լինելով մայր-հայ-
րենիքից՝ աւելի ներդրում էր դիմող հանդի-
սացաւ: Բայց դա մի նշան էր, որ ստորկ
հայերից ու անկախ գաղութականութեան մէջ
հաստատուի սաստիկ ատելութիւն: Բարոյական
և նիւթական աջակցութեան փոխարէն Հայաս-
տանը Վրիլկիայի դէմ կրօնական մի ամբողջ
պատերազմ սկսեց: Վանքերի մէջ տեղի ունէր
կատաղի բռնակռիւ: Հայերին աւանդութիւն-
ների պաշտպան հանդիսացան Սիւնիքի, Երա-
կի և Չորագետի կղերանոցները: Սիւնիքում ե-
կեղեցական ժողով դուստրվեց, որ զրեց կլի-
կեցիներին. «Հաւան ենք մեր հայրերի հետ
դժոխք իջնել, և ոչ հոռոմների հետ երկինք
բարձրանալ: Դրանից հեռու էլ չէր կարելի
գնալ»:

Բայց այդ կռիւների ժամանակ մի նշանաւոր
դէպք տեղի ունեցաւ, որ կարծես ճակատագրի
դառն հեղուկութիւն էր ցոյց տալիս: Սիւնիք
և նրա հետ միաբանված գաւառները կարծում
էին, թէ Վրիլկիան է այն միակ ճանապարհը,
որ ընտրել է ս. Պետրոսի աթոռը արշաւանք
գործելու համար, ուստի և աշխատում էին ո-
չնայեց այդ վտանգաւոր կէտը: Բայց յան-
կարծ կաթոլիկութիւնը պատուեց հենց Սիւնի-
քի սահմանները և բոյն զրեց պատերազմող
կղերանոցների կողքին:

Հայոց պատմութեան ընտրող փաստերից մէ-
կը, անկասկած, այն է, որ հայը զուր թշնամի-
րից անհամեմատ գերազանցօրէն է կարողացել
խառնել, տալիս ու վրա անել իր դժբախտ հայ-
րենիքը: Ամենակարող պապերի եռանդուն գոր-
ծողութիւնները Վրիլկիայում, նրանց դեպքա-
նների գրաւիչ խոստումները, ֆրանսիացի աղ-
նուականների ազդեցիկ կուսակցութիւնը, կա-
թոլիկ Լուսինեանները, Լամբրոնացիների ակա-
ղբիական դատողութիւնները եղբայրութեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԵՐԻՆ ՌՈՒՍԱՅ ՀԵՋՈՒՈՎ ԵՐԿՈՒՆԵՆԼՈՒ»
ԵՒ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ՀԱՐ-
ՑԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԵՐԻՆ» լրագրում, այս վերնագրի տակ,
տպված է Էյմիածին Սինոդի պրօկուրոր Կանչե-
լի հետեւալ յօդուածը:

Հայ-լուսաւորչականների երդման հարցը ծա-
ղեց մի փոքր ուրիշ պայմաններում, բան թէ
այն, որ բացատրված էր այս օրերս «ՀԱՅԵՐԻՆ»
լրագրում, որպէս բացատրութիւն Սինատի ու-
կալի:

1891 թին Էյմիածին հայ-լուսաւորչական սի-
նոդում սինոդի ղեկաւորաւոր նոր նշանակված
պաշտօնեաներից մէկին պէտք էր երդուցնել
Թագաւոր Կայսրի ծառայութեան հաւատարմու-
թեան մէջ. դա հին ծառայող էր, որ գեղեցիկ
զիտէր ուսուցէին: Սինոդում նախագահող նախ-
անդամ հանգուցեալ Երեմիա արքեպիսկոպոսը,
այն ժամանակաւ կաթոլիկոսական տեղապահը,
նշանակել էր երդման օրը և վարդապետին, որը
պէտք է երդուցնէր այդ պաշտօնեային: Եւ և
այն պաշտօնեան, ծառայութեան ծէսի համա-
ձայն, եկանք համադրեաներով: Սինոդի ան-
դամները հաւաքվեցին ատենական դահլիճը, իսկ
ես եկայ իմ առանձնատնեակը՝ հայերէն լեզուով
երդման թերթ պատրաստել տալու կարգադրու-
թիւնն անելու, որովհետեւ գործադրութիւնը
սինոդում առհասարակ կատարվում է այդ լե-
զուով, և անձամբ ես, որպէս նախկին հայտա-
րար դատարանի տոմար էի երդուցնել վկայներին
այդ լեզուով հայ բանաստեղծի միջոցով: Բայց
հանդիսանալով առաջին անգամ մի այնպիսի դէպ-
քի, երբ պէտք էր երդուցնել պետական ծառա-
յութեան մէջ գտնվող մի պաշտօնեային հաւա-
տարին լինելու զիմ բնիկ Թագաւորին, ինչ-
պէս ասված է բնական մէջ, և ինքս էլ ընտելա-
ցած լինելով, իմ ամբողջ ծառայութեան ըն-
թացքում, երդում տալ միտ ուսուց լեզուով
ես այդտեղ ակամայ կանգ առայ. յանկարծ չը

գիտեմ ինչու միտքս եկաւ հարցնելու ղեկաւոր-
աւոր, թէ առաջ ինչպէս էին կատարվում և
թէ արդեօք ոչինչ ցուցմունքներ չը կան այդ ա-
ռարկայի մասին սինոդի գործերում: Գործա-
վարներից մէկը իսկոյն և եթ ինձ տուեց երդ-
ման մասին գործը, և այնտեղ ես գտայ ներքին
գործերի պ. մինիստրի առաջադրութիւնը սինո-
դին, որ ստացված էր սինոդում դեռ իմ պրօ-
կուրոր նշանակվելուց առաջ: Այդ առաջադրու-
թեանը առիթ էր տուել հայ-լուսաւորչական բա-
հանայի մերժումը՝ երդուցնել նորակոչ ղեկաւոր-
չներին Աստարանում ուսուց լեզուով. մի և
նոյն ժամանակ մինիստրի առաջադրութեան մէջ
բերված էին համապատասխան օրէնքներ և
ցուցմունքներ և առաջադրվում էր պատշաճաւոր
առաջադրութիւններ անել՝ հայոց թեմերում նո-
րակոչ ղեկաւորներին ու ուսուց լեզուով
երդուցնել տալու համար:

Հենց այդտեղ, այդ գործի մէջ գտայ մինիս-
տրի և մի այլ, հաստատող առաջադրութիւնը, ո-
րին առիթ էր տուել այն հանգամանքը, որ պո-
րուհիկ Զօմարիճէի գործի ընդունման ժամա-
նակ Ռիֆլիսի նահանգական դատարանում հայ
ծագումի մի ուսուցիչը հրաժարվել էր երդուց
ուսուց լեզուով, և ամենախիստ կերպով ա-
ռաջարկվում էր սինոդին՝ կատարել առա-
ջին առաջարկութիւնը և անցապաղ
իմաց տալ գործը արդու լեզուով մասին,
«հակառակ դէպքում, ասված էր մինիստրա-
կան առաջարկութեան մէջ, ասին հայ-լուսաւոր-
չական բանաստեղծի դէմ, որոնք հրաժարվում
են երդուցնել ուսուցիչ լեզուով, իսկ այդ լե-
զուն չի ծաղկողներին թարգմանների միջոցով, և
ձեռք կառնվին խիստ միջոցներ»:

Սինիստրութեան այդ երկու կարգադրութիւն-
ներն ևս տեղի ունեցան ղեկաւորական մինիստրի
հաղորդագրութիւնների պատճառով: Իսկ հոգեւոր
վարչութեան կողմից այն հարցը, թէ անհնար
է նորակոչ ղեկաւորներին ուսուց լեզուով երդուց-
նել հայ բանաստեղծի միջոցով, յարուցեց Աս-
տարանի նախկին, և Ռիֆլիսի այժմեան թեմա-
կալ առաջնորդ արքեպիսկոպոս Գեորգ Սուրբ-
նեանցը:

սպանութիւններ, հայոյնք, մատնութիւններ
անպակաս էին: Կրօնական խտրութիւնը երկու
եղբայրներին հարկաւորում էր դիմել մահաւորա-
կան իշխողներին, նրանց օգնութիւնը, նրանց
աջակցութիւնը խնդրել միմեանց աւելի լաւ
զգգցելու համար... Առանց ամօթի, առանց
խորին զղուանքի չէ կարելի յիշատակել, որ
ուղղափառութեան համար միմեանց միւս ու-
սողների պաշտպանն ու դատաւորը Կարա-
Վոյնիւր և Ալ-Վոյնիւր թիւրքէն վայրենի,
արեւաբուր ցեղերի առաջնորդներն էին, ո-
րոնք այդ ժամանակ Հայաստանի և Ասորյա-
տական տէրերն էին և խորովում էին իրանց
հպատակ ազգաբնակիչները...

Ունիթօական շարժումը հայ կղերին կատա-
րեալ կատաղութեան և յանցանքների հասցրեց:
Վրիլկիայի Լուսինեանները, իրեն կաթոլիկներ,
փորձեցին պաշտպանել այդ ֆանատիկոս առա-
քաւորներին: Եւ հայ կղերական կուսակցութիւնը
սպանեց երկու թագաւորներին: Այդ բաւական
չէ. վերջին Լուսինեան թագաւորը զոհ գնաց մի
զղուելի դաւադրութեան, որ մանրամասն նկարա-
գրել է ժամանակակից Գարդէլ Գաւառութեան
հոգին և առաջնորդը հայոց կաթոլիկոսին էր.
նա կանչեց երկուստեք սուլթանին և նրա ձեռ-
քը յանձնեց զժախտ թագաւորին: Անկախ Վի-
լիկիան կորաւ. կաթոլիկ և լուսաւորչական
կղերը փառաւոր կերպով թաղեցին նրան խնու-
ւած ամենաբարի և մարդասէր Աստուծու Յիւնքը,
որ Բագրատունիների դասն էլ խորակվել էր
հայ և յոյն կղերի ձեռքով. աւելացնենք, որ
Արշակունիները թուլացան, ջլատվեցին այն
կուռի մէջ, որ եկեղեցականութիւնը վարում էր
հեթանոսութեան դէմ, և մեր առաջ կը կան-
գնեն երեք խոշոր, անփոխարինելի դոհեր: Ու՛մ
էին դրանք հարկաւոր: Վերջին, որ թագաւո-
րել էր ուղում, թէ և խաղաղութիւն, եղբայրու-
թիւնը քարոզող մեծ Վարդապետի փոխանորդ
էր անուանում իրան:

լի, ուրեմն, համեմատաբար, հայոց բաժինը աւելի աջող պետք է նկատուի Հանդէսի անալիզի զուգահեռ պատճառը արդիւնքի կողմից պէտք է վերագրել շահի և սահմանափակ բացակայութեան. վերջինս, իր եղբոր մասնական պատճառով, սակար էր և չէր կարողացել ներկայ լինել. այդ պատճառով էլ պարտից մեծամեծները և խանները մեծ մասը զլացել էր գաղութ, մասնաւորապէս իրենց հայրերը, իրենց մի նորութիւն, շատերին խորթ էր թւում: Եթէ հաշուենք և մուտքի տոմսակների արդիւնքը ու տրված նուէրները շահի, սահմանափակ և դանազան անձանց կողմից, գուցէ ամբողջ արդիւնքը շահի 4000 ռուբլու: Ենչտեղ է այն հանգամանքը, որ Թէհրանում ընկալվող բազմաթիւ եւրոպացիներից և գեւապաններից և ոչ մինը, բացի օսմանեան գեսպանից, ներկայ չէր հանդէսին: Առհասարակ, եւրոպական գաղութականութիւնը Պարսկաստանում հետամուտ է միայն շահագործութեան. նա սխտեմատիկ կերպով խոյս է տալիս այն ասպարէզներից, ուր նա կարող է օգտակար լինել երկրին իբրեւ կուլտուրական տարր. նա չէ կամենում մի բաժնի էլ առանց շահասիրութեան գործել, նա կամենում է միայն ծծել, առանց փոխարէնը մի բան տալու:

Պարսից արտաքին գործերի մինիստր Մուշիր Դովլէն այսօր ճանապարհ ընկաւ դէպի Բագու. մինիստրը գնում է Եւրոպա բժշկվելու: Նրա բացակայութեան ժամանակ, արտաքին գործերի մինիստրի պաշտօնը պէտք է վարէ սահմանափակ չ. Ա.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

11 մայիսի

ՊԵՏՏՐՈՒԹՅՈՒՆ: Այսօր Ե. Վ. Բոգդանովիչ, «ՇԵՏԻ» լրագրի մէջ խօսելով Ստեփան Գետերբուրգում կատարած դատախօսութեան առիթով, խաղաղութեան կոնֆերենցիայի վերաբերմամբ հաղորդում է, թէ անդրկական բարոյչի այն հարցին, թէ ո՞վ կարող է Գետերբուրգում գլուխ կանգնել խաղաղութեան գաղափարը տարածելու գործին, պատասխան ստացաւ, թէ մետրոպոլիտ Անտոնի, այնպէս ինչպէս Անդրկայում իր վրա է առել այդ պաշտօնը Անդրկայի արքեպիսկոպոսը: Բոգդանովիչ ցանկութիւն է յայտնում, որ մեր ամենայնաբազմ չորսուսուկեւ աշակերտ թէ խաղաղութիւն և հանգստութիւն ժողովուրդ մեզ մօտ, տանը, և թէ ամենամեծ բարիքը իրագործելուն, որի համար մեր եկեղեցին ամենայն օր ուղղում է իր աղօթքները Ամենակարողին:

ՊԱՐԻՋ: Գիլէնը գաղթականութեան մինիստրութեան ղեկավար Բէնէդէկ ուղարկեց դիմաւորելու Գալլիէին, որը վաղը կիջնի Մարսէլ և ուրբաթ կը հասնի Պարիզ, որտեղ Գիլէն ի պատիւ նրա ճաշ կը տայ:

ՀԱՄԳԱ: Նրկար վիճաբանութիւններից յետոյ՝ մեծ պետութիւնների առաջին պատգամաւորները համաձայնութիւն կայացրին ժողովներին նախագահ ընտրելու հարցի վերաբերմամբ: Առաւօտեան կը կայանայ բոլոր առաջին պատգամաւորների ժողովը՝ Անտառային տնակում: Կէսօրին պատգամաւորները կը ժողովեն ընդհանուր նիստի, երեկվայ որոշումները հաստատելու համար: Առաջին յանձնաժողովը պէտք է գումարվէր ժամի 10-ին առաւօտեան, բայց կը գումարվի ժամի 4-ին ցերեկվայ:

Մայիսի 12-ին

ՀԵԼՍԻՆԿՑՈՐՍ: Սէյմը այսօր գումարվեց ըստ դասակարգների, որպէս զի վիճաբանութիւնների միջոցով ընդէ երկու մասնաժողովների առաջարկած որոշումները: Երբորդ մասնաժողովը (ֆինանսական) դեռ չէ ներկայացրել իր որոշումը:

ՀԱՄԳԱ: Բէյութի գործակալութեան թղթակիցը հաղորդում է հետեւեալը. — Մինչև այժմ խաղաղութեան կոնֆերենցիայի նոյն-իսկ պատգամաւորների համար անկարելի էր իրանց բացատրել իսկական դրութիւնը, և մինչև այժմ հրատարակված կարծիքները վաղաժամ էին: Իսկ այժմ, երբ պատգամաւորները հնար ունեցան միմեանց հետ խօսակցելու, մտքեր փոխանակելու և իրանց հաշիւ տալու կօֆերենցիայի աշխատանքներին պատրաստվելու մասին՝ մենք պարտք համարեցինք հարցումներով դիմել պատգամաւորների գլխաւորներից մի քանիսին: Ամերիկական պատգամաւորութեան գլխաւորը, Ուայտ, յայտնեց. Էրթլիւնը բաւարար է: Առաջին կազմակերպական աշխատանքը լաւ կատարվեց: Ես լիայոյս եմ, որ հնարաւոր է հասնել

գործնականապէս օգտակար հետեւներ: Առաջին օրերի կասկածաւորութիւնը պէտք է տեղ տայ լուրջ յոյսերի, թէպէտ հարկ չէ ոչինչ չափազանցացնել: Գերմանական կայսեր խօսքերը նպաստեցին դրութեան բարեբեկում: Կարծում եմ, մեզ կը յաջողվի հասնել մի որոշ հետեւներ՝ միջնորդութեան և միջնորդ դատարանի վերաբերմամբ: Միջնորդ դատարանը պարտաւորական դարձնելը, անտարակոյս, անկարելի կը լինի, բայց դատարանը գոնէ կուհնայ կամաւորի նշանակութիւն: Կարծում եմ, կօնֆերենցիայից յետոյ պետութիւնները կը տեսնեն, որ բացի պատերազմից կայ և ուրիշ միջոց վէճերը լուծելու: Սա — առաջին առաջադիւծութիւն է: Նոյնպէս համոզված եմ, որ զինուորական օրէնքների և սովորութիւնների մէջ էական բարեփոխութիւններ կը ժողովեն՝ մարդկային տեսակետից. որ 1864 թ. Ժընէվի դաշնագրութիւնը ցամաքային պատերազմի մասին՝ կը տարածվի և ծովային պատերազմների վրա և մասնաւոր սեփականութեան պաշտպանութիւնը ծովային պատերազմների ժամանակ՝ կը զրոյեցնայ: Գալով սպառնալիցութեան սահմանափակութեանը, որ յանձնված է առաջին մասնաժողովին՝ ոչինչ չեմ կարող յայտնել՝ բացի յոյսից, որովհետեւ կօնֆերենցիայի աշխատանքները դեռ չեն սկսվել: Մի ուրիշ պատգամաւորութեան գլխաւորը, մի նշանաւոր դեսպան, հօր պետութիւնների ներկայացուցիչ՝ յայտնեց՝ հետեւեալը. «Այն իրողութիւնը, որ պետութիւնների ներկայացուցիչները ժողովներին հասնում, որ Ռուսաց Կայսրը կարողացաւ գումարել խաղաղութեան կօնֆերենցիայի՝ առաջին կարեւորութիւն է ներկայացնում: Սա ապացուցանում է, որ Ռուսաց Կայսրը իր կառավարութիւնը վարում է խաղաղութեան կողմը և ցոյց է տալիս դիտաւորութիւն՝ պատերազմների միջամուխ չը լինել. իսկ այս նշանները այնպիսի երկոյթներ են, որոնք մեծ ազդեցութիւն կունենան համաշխարհային խաղաղութեան օգտին: Ինչ վերաբերում է անմիջական գործնական հետեւներին, որոնց կարող է հասնել կօնֆերենցիան՝ պէտք է յուսալ, որ մեր աշխատանքները կատարելուց յետոյ, մենք հնարաւորութիւն կունենանք դիմել մեր կառավարութիւններին՝ գործնական առաջարկութիւններով յօդուտ խաղաղութեան և պատերազմների մարդասիրացման: Պատգամաւորների գլխաւորներից մէկը, որ իր երկրում բարձր դիրք ունի և որի երկրը, ոչ-հեռու ժամանակ կատարված դէպքերի պատճառով, առանձնապէս հետաքրքրված է կօնֆերենցիայի հետեւներով՝ այս կարծիքն յայտնեց. «Հաւաքում ժողովված պատգամաւորներն զգում են առաջին պատասխանատվութիւն իրանց կառավարութիւնների և բոլոր երկրների հասարակական կարծիքի առաջ: Ուստի անկարելի է, որ կօնֆերենցիան ցրվէր՝ առանց մի բան անելու: Ինչ որ ես տեսայ Հաագա գալու օրից՝ բոլորը ցոյց են տալիս, թէ բոլոր պատգամաւորները խոր գգում են այս պատասխանատվութիւնը: Մարդկայնութիւնը, ազգերի շահերը և հասարակական կարծիքը հրամայում են մեզ աշխատել խաղաղութեան ոգով և սրանով խել սօցիալական շարժման սարսափելի փաստաբանութիւնը: Պատգամաւորները բոլորը կարծում են, թէ շատ բան կարելի է անել պատերազմները մարդասիրացնելու և այն բանի մէջ, որ միջնորդութեան սկզբունքը ընդհանրացնելով՝ պատերազմները աւելի հաղուաղիւտ դառնան: Բայց ըստ երկոյթին շատ դժուար կը լինի գործնական վճիռ գալ՝ սպառնալիցութիւնները սահմանափակելու խնդրում: Բոլորը կարծում են, թէ այս հարցը ըստ ինքեան, առանց կօնֆերենցիայի նախաւեալ նպատակին էլ, միւսներից շատ աւելի ստոր տեղ կը գրաւէ, քանի որ ժողովի իսկական նպատակն է աշխատել գտնելու միջոցներ՝ միջազգային զեւոթաւորութիւնները լուծելու առանց պատերազմների: Զորքերը պատգամաւորը միւսոյն հայեացքին հարցը մեր աչքում չունի մեծ գործնական նշանակութիւն, թէպէտ սպառնալիցութեան սահմանափակումը կօնֆերենցիայի էական նպատակներից մէկն է կազմում: Ապառազիւնութեան վերացումը չէ կարող գլուխ գալ անմիջական եւրոպական պատգամաւորների աւելի հարցում: Հէտլեհտէ նրա վերացումը պէտք է գալ ինքն իրան, իբրեւ բնական հետեւներ ընդհանուր դրութեան բարեբեկում, պատերազմների հազուադէպ դառնալուն և գործնական խաղաղ միջոցների գոյութեան, որոնցով կարելի լինի լուծել բոլոր միջազգային դժուարութիւնները: Այս բոլոր կարծիքներն յայտնված են այսօր և

ցոյցանում են պատգամաւորների ընդհանուր տրամադրութիւնը՝ կօնֆերենցիայի զբաղմունքներն սկսելու բողէին: Պէտք է աւելացնել, թէ պատգամաւորների մեծամասնութիւնը համոզված է, թէ մասնաժողովների աշխատութիւնները մանրամասնութիւնների մէջ մեծ դժուարութիւնների կը հանդիպեն և թէ կօնֆերենցիան երկար կը տևէ: Այս կարծիքն ամբողջովում է հետզհետէ քանի որ մօտենում է ժամանակը՝ երբ պէտք է բոլոր հարցերը յարուցվեն:

ՀԱՄԳԱ: Բոլոր առաջին պատգամաւորների նիստը Անտառային տնակում տեղի ունեցաւ այս առաւօտ: Ներկայ եղողներին յայտնվեցին մեծ պետութիւնների առաջին պատգամաւորների որոշումները: Յետոյ նրանք գումարվեցին ընդհանուր ժողովի, որի մէջ ձևապէս ընդունվեց նախագահների և քրեօնների ընտրութիւնը: ՊԱՐԻՋ: Դեղին տնակը առանձին ուժգնութեամբ շարունակվում է Մեծ Բառասմում հաստատված է 15 մասնական դէպք: Հարկ եղաւ Մեծ Բառասմը դատարկել:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻԲԱՂԱՄԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՎՈՒՄ ԵՆ

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ Այց Թիւրքաց Հայաստանին (սակաւածիւ), դիրք 60 կօպ:

Ժողովրդի կը թուրքիւնը մեզանում, դիրք 2 կօպ:

1—5

Ուրբաթ, մայիսի 14-ին

Արքայական աշտում, Թիֆլիսի մանուկներին խնամող ընկերութեան օգտին լիկեյու է

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Տ Օ Ն

խաղաղների վաճառումով Այգում լինելու են երկու խումբ մուգիկա, դուռնա, երգեցիկ խումբ ու մանկական խաղեր:

Երեկոյեան լուսավառութիւն ու 8 ժամին հրախալ: Սկիզբն է ժամի 8-ին ճաշից յետոյ: Մուտքն է 20 կօպէկ, երեխաները վճարում են 10 կօպէկ: Եթէ վատ եղանակ լինի, ՏՕՆԵ կը յետաձգվի մինչև նոր կարգադրութիւն:

3—4

ՀԱՅԹԱՅՈՐՈՂ ԲԱՐՁՐԱՅԻՆ ՊԱԼԱՏ

Ա. ԲԱԼԼԵ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱ

ԾԱՂԿԱՅՈՒՐ

ՈՐ ՓՈԽԱՐԵՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՀՈՏԱԼԵՏ ՋԻԲԸ.

Սրուակը 60 կ. և 1 ռուբլի:

ԾԱՂԿԱՍԱՊՈՆ (բարձր տեսակից)

8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԺԱՂԿԱՅԻՆ ԳԼԻՑԵՐԱՅԻՆ ՍԱՊՈՆ

8 տեսակ հոտով, կտորը 20 կօպ.

ԹԱԼԵՑԻՆ ՊՈԼԻՐԱ

Արկը 25 կօպ. և 50 կօպ.

Москва, 1) Пассажи Солодовникова, 2) Тверская, д. Спиридонова, С.-Петербург, Невский 18.

Նաև Ռուսաստանի յայտնի դեղատներում:

(Է.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՖԻԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԳԵԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Վանճաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլսի: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 12/24 մայիսի ՄԻՆԳՐԵԼԻ չորեքշաբթի, նաւապետ ԵԼԻՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակաւորներին:

ԲԱՐՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արսիօն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա Նանին, Սիօնի փող. Խօշափարութիւն և Մալալաճէ բարձրասար: ԲԱՐՈՒՄ—պ. Ս. Կիլարեանին Վոլոքալկինան հրապարակ: ՆՕՎՕՐՕՍՍԻՅԱԿ—պ. Մելիքի Հերշերօդերին:

(Է. 5. 2.)

12—20